Հավելված
Հաստատված է
ԵՊՀ ռեկտորի 20.06 2024թ. թիվ 117/Ռ-Հ հրամանով

ԸՆԹԱՑԱԿԱՐԳ
ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆՈՒՄ ՎՃԱՐՈՎԻ ՀԻՄՈՒՆՔՆԵՐՈՎ ԴԱՍԸՆԹԱՑԻ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅԱՆ

1.ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Սույն ընթացակարգը սահմանում է Երևանի պետական համալսարանում (այսուհետ՝ ԵՊՀ) առանձին դասընթացի մասնակցության և կրեդիտների ձեռքբերման գործընթացի կազմակերպման և անցկացման կարգը:

2. Դասընթացի մասնակցությունը կազմակերպվում է վճարովի հիմունքներով՝ հիմք ընդունելով տվյալ ուսումնական տարվա բակալավրի և մագիստրոսի կրթական ծրագրերի մեկ կրեդիտի համար սահմանված արժեքը:

2. ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ

3. Դասընթացին մասնակցությունն իրականացվում է դասընթացի մասնակցության համար սահմանված դիմումը ներկայացնելուց և վճարումը կատարելուց հետո: Դիմումը լրացվում է e-request հարթակում կամ ներկայացվում է ԵՊՀ ընդհանուր բաժին՝ սույն ընթացակարգի 4-րդ կետում ներկայացված ժամանակացույցի համաձայն:

4. Դասընթացի մասնակցության դիմումները ներկայացվում են կիսամյակի դասերի մեկնարկին նախորդող երկու և հաջորդող մեկ շաբաթների ընթացքում:

5. Սահմանված ժամանակահատվածի ավարտից հետո ներկայացված դիմումը չի քննարկվում:

6. Դիմումատուն կարող է միաժամանակ մասնակցել մի քանի դասընթացների:

7. Դասընթացի ընտրությունն իրականացվում է տվյալ ուսումնական տարվա ընթացքում գործող մասնագիտական կրթական ծրագրերից, որոնք հասանելի են ԵՊՀ կայքէջում:

8. Դասընթացին մասնակցելու թույլտվություն ստացած անձը դասընթացին մասնակցում է մասնագիտական կրթական ծրագրի ուսումնական պլանով նախատեսված կիսամյակում և ձևավորված դասացուցակով:

9. Դասընթացի մասնակցին e-learning.ysu.am ուսուցման կառավարման համակարգում հասանելի է դառնում դասընթացի նկարագրիչը, դասընթացին վերաբերող ուսումնամեթոդական նյութերը և անհրաժեշտ տեղեկատվությունը:

10. Դասընթացի համար հատկացված ժամաքանակի առնվազն 80 տոկոսի մասնակցության դեպքում մասնակցին կարող է տրվել երկլեզու հավաստագիր՝

- դասընթացին մասնակցության և կրեդիտի շնորհման վերաբերյալ (դասընթացի ուսումնական արդյունքների գնահատման նվազագույն դրական շեմը հաղթահարելու դեպքում),
- միայն մասնակցության վերաբերյալ (մասնակցության ժամաքանակի նշումով):